**ԿԱՀՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**№ «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1»**

ք. Երևան «29» մարտի 2021թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս ընկերության տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արսեն Բադալյան Ռաֆիկի» ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Արսեն Բադալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (միասին հիշատակվելու դեպքում՝ Կողմեր, առանձին՝ Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Կատարողը, Պատվիրատուի հանձնարարությամբ, պարտավորվում է պատրաստել և ք.Երևան, Կոմիտասի պողոտա 49/4 հասցեում տեղադրել Պայմանագրի Հավելվածով նախատեսված կահույքի պատրաստման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքի արդյունքը և հատուցել Կատարողին Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի Հավելվածով բերված են պատրաստվող կահույքի պատրաստման աշխատանքների բաղադրատարրերի (կոմպլեկտի), դրանց քանակների, արժեքների վերաբերյալ տվյալները Հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. կահույքի պատրաստման աշխատանքների համար անհրաժեշտ բոլոր նյութերն ապահովում է Կատարողը՝ իր միջոցների հաշվին:

1.4. կահույքի պատրաստման աշխատանքների համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները (այդ թվում նաև՝ մասնագետներին) ներգրավում է Կատարողը՝ իր միջոցների հաշվին՝ վերջիններիս գործողությունների համար մնալով պատասխանատու Պատվիրատուի առաջ:

1.5. կահույքի տեղափոխումը և (կամ) տեղադրումը Պայմանագրի 1.1 կետով նշված վայրում իրականացվում է Կատարողի կողմից և վերջինիս միջոցների հաշվին:

1.6. կահույքի պատրաստման աշխատանքների (դրա առանձին տարրերի) չափերը տեղադրման վայրի իրական (փաստացի) չափերի հետ համապատասխանեցնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Կատարողը պարտավորվում է կազմակերպել տեղադրման վայրի լրացուցիչ չափագրում, ինչը թույլ կտա Կատարողին չափագրման արդյունքում հասկանալու Պայմանագրի Հավելվածով նախատեսված կահույքի պատրաստման աշխատանքների առանձին բաղադրատարրերի չափերի փոփոխությունը (եթե առկա կլինի չափերի փոփոխություն): Ամեն դեպքում, Կատարողը պարտավոր է կահույքի պատրաստման աշխատանքները (դրա առանձին տարրերը) գծագրել և պատրաստել այն հաշվարկով, որպիսի հնարավոր լինի դրա (դրանց) տեղադրումը՝ անկախ այն հանգամանքից, որ տեղադրման արդյունքում կարող է տեղի ունենալ կահույքի պատրաստման աշխատանքների (դրա առանձին

տարրերի) չափերի շեղում Պայմանագրի Հավելվածով նախատեսված կահույքի առանձին բաղադրատարրերի չափերից:

1.7. Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում 25 ապրիլի 2021թ:

1.8. Աշխատանքների կատարումը համարվում է ավարտված Կատարողի կողմից Աշխատանքներն ավարտված լինելու վերաբերյալ Պատվիրատուին տեղեկացնելու օրը: Կատարողի տեղեկացումը ստանալուց հետո Պատվիրատուն պարտավոր է անմիջապես սկսել կատարված Աշխատանքի ընդունման գործընթացը՝ Պայմանագրի 1.9 կետով սահմանված կարգով:

1.9. Աշխատանքի հանձնումը և ընդունումը կատարվում է Պայմանագրի 1.8 կետով նշված տեղեկացումը տրվելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում նույն ժամկետում կազմվում է Աշխատանքների հանձնման-ընդունման ակտ (այսուհետ՝ Ակտ):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Պայմանագրի ընդհանուր գինը Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանվում է 526,000 (հինգ հարյուր քսանվեց հազար հիսուն) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը), որը Կատարողին է վճարվում ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով՝ Պայմանագրում նշված կամ հաշվարկային փաստաթղթով նշված բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով, հետևյալ կարգով.

263000 (երկու հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամը, որպես կանխավճար, վճարվում է մինչև 2021թվականի ապրիլի 02-ը:

263000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ մնացյալ գումարը վճարվում է Կատարողի կողմից հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու օրվանից հետո 20 (քսան) բանկային օրվա ընթացքում:

2.3. Կատարողը պարտավոր է դուրս գրել հաշվարկային փաստաթուղթը Ակտի կազմման օրվանից հետո 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***3.1. Կապարողը՝***

- պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ՝ իր սեփական միջոցներով, իր գործիքներով և սարքավորումներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ներգրավել երրորդ անձանց կամ հրավիրելով այլ մասնագետների,
- պարտավոր է օգտանգործել կահույքագործական արտադրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված նյութերը,
- պարտավոր է Աշխատանքը կատարել պատշաճ, որակով և Պայմանագրով սահմանված ժամկետում,
- պարտավոր է դրսևորել առավելագույն փութաջան վերաբերմունք Պատվիրատուի գույքի նկատմամբ, իսկ մեղավորությամբ վնասելու դեպքում հատուցելու դրա արժեքը կամ իր միջոցներով վերացնելու պատճառված վասը,
- իրավունք ունի Պատվիրատուից պահանջել կատարելու Պայմանագրի 2.1 կետով նախատեսված վճարման պարտականությունը, իսկ չկատարելու դեպքում՝ պահանջելու

տուժանքի վճարում՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,5 տոկոսի չափով:

***3.2. Պատվիրատուն՝***

• պարտավոր է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել Կատարողին,

• իրավունք ունի հետևել Աշխատանքի ընթացքին՝ առանց միջամտելու Կատարողի մասնագիտական գործունեությանը,

• իրավունք ունի Պայամանագրի սահմանված ժամկետում Աշխատանքի արդյունքը ընդունման համար պատրաստ չլինելու դեպքում՝ համամասնորեն պակասեցնելու Աշխատանքի արժեքը՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար Պայմանագրի գնի 0,5 տոկոսի չափով:

## 4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

4.2. Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համապատասխան: Կողմը, որի համար վերոհիշյալ պատճառներով սույն պայմանագրով պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս Կողմին նման հանգամանքների ի հայտ գալու և Պայմանագիրը վերանայելու մասին 1 (մեկ) շաբաթվա ընթացքում: Ընդ որում, ֆորս-մաժորային հանգամանքը պետք է հաստատված լինի իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթերով:

4.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամիս և ավելի, Կողմերը պետք է գրավոր կարգով համաձայնություն ձեռք բերեն սույն պայմանագրով պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ դրա լուծման հարցի շուրջ:

## 5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կողմերի միջև Պայմանագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, բանակցություններ վարելու միջոցով, իսկ անհընարինության դեպքում՝ դատական կարգով:

5.2. Պատվիրատուի և Կատարողի միջև Աշխատանքների թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած Կողմի պահանջով կարող է նշանակվել փորձաքննություն, որի ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած Կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու Կողմի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

## 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարշաճ կատարման դեպքում Կողմը, որի մեղքով կատարվել է խախտումը, պարտավորվում է փոխհատուցել մյուս Կողմին պատճառված իրական վնասը:

6.2. Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը և վավեր է, եթե կատարված է գրավոր և ստորագրված Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.3. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

6.4. Պայմանագրի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ մասին առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին և հատուցելով նրան պատճառված իրական վնասը:

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողանի կնքելու (ստորագրելու) պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4,
ՀՎՀՀ 00011624
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
h/h՝ 163058101441

_______________ Ա.Բազարչյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԱՁ «Արսեն Բադալյան Ռաֆիկի»
Հասցե՝ ք.Երևան,Դավիթաշեն 4 թաղ. 33բն.
ՀՎՀՀ 20200371
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h՝ 2052832317801001

_______________ Ա.Բադալյան

*Հավելված թիվ 1*
*« 29 » նոյեմբ 2021թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ***
**«ԿԱՀՈՒՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N | Անվանում | Չափման միավոր | քանակ | գին | ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | լամինատ | լիստ | 6 | 28000,00 | 168000 |
| 2 | սեղանածածկ (ստալիչնիցա) | լիստ | 2 | 30000,00 | 60000 |
| 3 | սալյասկա | հատ | 22 | 1800 | 39600 |
| 4 | բռնակ | հատ | 31 | 500 | 15500 |
| 5 | դռան բռնակ | հատ | 22 | 500 | 11000 |
| 6 | սեղանածածկի եզրերին փակցվող երիզ | հատ | 3 | 2300 | 6900 |
| 7 | լվացարան | հատ | 2 | 20000,00 | 40000 |
| 8 | տեղադրում | դրամ | | 130000,00 | 130000 |
| 9 | այլ ծախսեր ներառյալ հարկերը | դրամ | | 55000,00 | 55000 |
| **10** | **ընդամենը** | | | | **526000** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Կոմիտաս49/4 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4,
ՀՎՀՀ 00011624
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
h/h՝ 163058101441

_______________ Ա.Բազարչյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԱՁ «Արսեն Բադալյան Ռաֆիկի»
Հասցե՝ ք.Երևան,Դավիթաշեն 4 թաղ. 33բն.
ՀՎՀՀ 20200371
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h՝ 2052832317801001

_______________ Ա.Բադալյան

*Հավելված թիվ 2*
*« 29 » Մարտ 2021թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Կահույքի ամբողջական պատրաստում | 29.03.2021թ | 25.04.2021թ |
| 2 | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4,
ՀՎՀՀ 00011624
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ՝ 163058101441

______________ Ա.Բազարչյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԱՁ «Արսեն Բադալյան Ռաֆիկի»
Հասցե՝ ք.Երևան,Դավիթաշեն 4 թաղ. 33բն.
ՀՎՀՀ 20200371
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ՝ 2052832317801001

______________ Ա.Բադալյան

*Հավելված N 3*
*« 29 » [illegible] 2021թ. կնքված*
*«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45421140/1 | Կահույքի պատրաստման աշխատանք | ...% | ...% | 263000 | 526000 | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 526000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4,
ՀՎՀՀ 00011624
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
h/h՝ 163058101441

_______________ Ա.Բազարչյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԱՁ «Արսեն Բադալյան Ռաֆիկի»
Հասցե՝ ք.Երևան,Դավիթաշեն 4 թաղ. 33բն.
ՀՎՀՀ 20200371
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h՝ 2052832317801001

_______________ Ա.Բադալյան

Հավելված թիվ 4
« 29 » Մայիսի 2021թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
____________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժա |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մա<br>նա<br>կա<br>ցույ<br>ցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
« 29 » Դեկտ. 2021թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ-ՄԱԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. __________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն